ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) ծրագրերի իրականացման վարչության հետազոտական ծրագրերի բաժնում (այսուհետ՝ Բաժին) փորձագետ ներգրավելու մասին

Աշխատանքի համառոտ նկարագիրը

1. գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային և գիտական դրամաշնորհային ֆինանսավորման հետ կապված բյուջետային գործընթացների իրականացում,
2. գիտական կադրերի պատրաստման նպատակով ուսումնասիրությունների կատարում,
3. գիտության համակարգի գործունեության որակի և արդյունավետության մշտադիտարկման իրականացմանը մասնակցություն,
4. գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառի մրցութային ծրագրերի աշխատանքների իրականացում,
5. միջպետական համագործակցության շրջանակներում գիտատեխնիկական մրցութային ծրագրերի աշխատանքների իրականացում,
6. օտարերկրյա պետությունների, այդ թվում՝ Սփյուռքի գիտնականների ներուժի ներգրավմանն ուղղված ծրագրերի իրականացում,
7. իրավական ակտերի նախագծերի, զեկուցագրերի, առաջարկությունների, տեղեկանքների, միջնորդագրերի և այլ գրությունների նախապատրաստում:

Փորձագետին ներկայացվող պահանջները

1. բարձրագույն կրթություն,
2. օտար լեզուների իմացություն,
3. համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն,
4. «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին», «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի մասին» ՀՀ օրենքների և իր գործառույթների իրականացման ապահովման համար անհրաժեշտ իրավական այլ ակտերի իմացություն:

Փորձագետ ներգրավելու ժամկետը

Փորձագետը ներգրավվում է մեկ տարի ժամկետով:

Փորձագետի պարտականությունները

1) բարեխղճորեն կատարել ստանձնած աշխատանքները,

2) սահմանված ժամկետներում կազմել և ներկայացնել կատարված աշխատանքների մասին ամփոփ հաշվետվություն,

3) պահպանել Կոմիտեի ներքին կարգապահական կանոնները, աշխատանքային կարգապահությունը,

4) պահպանել աշխատանքի պաշտպանության և անվտանգության ապահովման միջոցները,

5) իրականացնել աշխատանքային օրենսդրությամբ, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով և աշխատանքային պայմանագրով իրեն վերապահված այլ պարտականություններ:

Ներկայացվող փաստաթղթերի ցանկը

1. լուսանկար 1 հատ (3x4 չափի),
2. դիմում (ձևը կցվում է),
3. անձնագիր (ՀԾ համարանիշ),
4. դիպլոմ (դիպլոմներ),
5. աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթուղթ,
6. զինվորական գրքույկ (առկայության դեպքում),
7. հայտարարություն ՀՀ կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի N 878-Ն որոշման հավելվածի 13-րդ կետով նախատեսված սահմանափակումների բացակայության մասին (ձևը կցվում է),
8. ինքնակենսագրություն:

Փորձագետի ընտրությունը կկատարվի դիմում ներկայացրած քաղաքացիների փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում:

Քաղաքացիները փաստաթղթերը ներկայացնում են անձամբ յուրաքանչյուր օր ժամը 09:30-ից մինչև 12:30-ը (ք. Երևան, Օրբելի եղբայրների 22, 7-րդ հարկ, 703 սենյակ, Անձնակազմի կառավարման բաժին):

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք զանգահարել Կոմիտեի անձնակազմի կառավարման բաժին (+374 10) 210140 (ներքին՝ 107) հեռախոսահամարով:

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետն է 2024 թվականի դեկտեմբերի 16-ը: